

Պոթուշանի Հայերն, մէյ մէկ եւ Սուչավայի Հայերն վանք մը եւ երկու եկեղեցի ունին¹³² :

Հօրն Բինտուի այս տեղեկութիւններէն կ'երեւայ, որ Հռոմէական եկեղեցին Լիհաստանի եւ Մոլտաւիոյ Հայոց դարձին շատ կ'աշխատէր, որ մասին — ինչպէս քիչ ետքը պիտի երեւայ — մինչեւ մեր ժամանակները կ'աշխատի:

Յովհաննէս Գ. Սոպիեքի Լեհաց Թագաւորին Տաճկաց դէմ վարած պատերազմին ժամանակ, եւ երբ Մոլտաւիոյ իշխեցին՝ Ստեփան Բեդրիէյքու, (1672—1674) Տիմիդրաշքու Քանդաքուզին (1674—1676) եւ Կոստանդին Քանդէմիր (1685—1691), Մոլտաւիոյ բնակիչներէն շատերը փախան, եւ երբ Լեհերն յամին 1675 Հոկտ. 15ին եւ յետոյ յամին 1686 Հոկտեմբերին¹³³ Սուչավա քաղաքն այրացաւ եւ ըրին, քաղաքին ամէն բնակիչներն՝ նաեւ Հայք փախան, այնպէս որ Լեհք երբ ներս մտան, հոն մի միայն անձ մը գտան Դուրքուլէց անուամբ¹³⁴ :

Շմիտ իւր Յիշատակարանաց 187⁷ իջին մէջ կը պատմէ՝ թէ Սոպիեքի յամին 1686 Հոկտ.ին իւր աւերիչ արշաւանքէն դարձած ժամանակ՝ անցնելով Մոլտաւիոյ մէջէն, Սուչավա 14 օր կեցաւ մինչեւ որ կայսերական օգնական գունդն հասնի, եւ այս միջոցին այն ժամանակի մի միակ¹³⁵ ամբուրթիւնն՝ զԶամբա հողաբլրով ամրացուց, որ մինչեւ ցայսօր կը կենայ: Բայց այս պարագայն անոր համար չի կրնար ճիշդ ըլլալ, որ Սոպիեքին ասով այս ամբուրթիւնն իրեն դէմ զօրացուցած կ'ըլլայ: Բայց ստոյգ է որ Սո-